ԴԵՊԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի նկարչի տանը բացված նոր ցուցահանդեսում դարձյալ անսովոր ներդաշնակություն էր լույսի և ստվերի, ծավալի և տարածության... Բայց այս անգամ Ռուդոլֆ Խաչատրյանի նկարները չունեին 1970-ական թվականների գծանկարների փայլը, «սալոնային գեղեցկությունը»: Բնորդը նրան քիչ է հետաքրքրում միայն կեցվածքով ու տեսքով: Բնորդը նրա համար ուրույն մի աշխարհ է, ինչպես պատանության տարիներին: Նոր դիմանկարների միջոցով նա արտահայտել է վերջին տարիների իր ապրումները, մտահոգությունները, կարոտը այն մարդկանց ու երկրի հանդեպ, որոնք միշտ էլ նրա արվեստի նյութն են եղել:

Նկարչի հայացքի տակ այդ նյութը միայն հետաքրքիր առարկա չէ, այլև խոհ է, մտահոգություն, հշմարտություն:

«Նկարչի եղբոր դիմանկարը», «Ջեմմա», «Հրանտ Մաթևոսյան», «Սոս Սարգսյան», «Էդվարդ Խարազյան», «Ինքնադիմանկար» և այլ նկարներ մեր ուշադրությունը գրավում են ոչ միայն իրենց անկրկնելի խառնվածքներով, մարդկային ճակատագրերով, այլև ընդհանրական գծերի դաշնությամբ, որին Ռուդոլֆ Խաչատրյանը հասել է առանց կանխամտածած հնարքների, երևույթին մոտեցել ի խորոց սրտի: Իսկ բնանկարները և հատկապես «Շոգ օրը», ասում են, որ նա վերջապես համարձակորեն բացել է այն շքեղ դարպասի դուռը, որտեղից երևում են իր հին ու չքնաղ երկրի հոգևոր սահմանները:

Ռ. Խաչատրյան. Տղայի դիմանկարը

Ռ. Խաչատրյան. Է. Խարազյանի դիմանկարը

Ռ. Խաչատրյան. «Պուշկին—երկխոսություն»

Ռ. Խաչատրյան. Շոգ օր



ISSN 0132—1323

ՍՈՎԵՏԱԿԱՆ արվեստ

9

9. 1988 „Арвест" Ереван